XXVVII

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԱՆՐ ՀԱՏՎԱԾՆԵՐ

Այս անվան տակ տալիս ենք ժամանակագրական մի շարք հատուկտորներ, որոնք գերազանցապես դեպքերին ժամանակակից անձնավորությունների կողմից արձանագրված եղելություններ են։

Ա. Բրիտանական թանգարանի հայերեն ձեռագրերի ցուցակում[1] № 116-ի տակ նշված ձեռագրի տարբեր էջերում հանդիպում ենք ժամանակագրական մի քանի տեղեկությունների, որոնք մեծ մասամբ վերաբերում են Կիլիկիայում տեղի ունեցած դեպքերին։ Այդ տեղեկությունները սկսվում են 1102 թվականից և հասնում մինչև 1382 թվականը։

Բ. Մատենադարանի № 3189 ժողովածուի 91 թերթում գտնվում է Հուլաուի հաջորդների ցանկը։ Ժամանակագրությունը սկսվում է դեպի Անդրկովկաս կատարած մոնղոլների առաջին արշավանքով և վերջանում 1359 թվականին Ջելաիրների շեյխ Ուվեյսի գահակալության հիշատակությամբ։ Ենթադրում ենք, որ այս ժամանակագրությունը XIV դարի երկրորդ կեսից առաջ կազմվել չէր կարող։

Գ. Ժամանակագրական հատվածը գտնվում է № 84 ժողովածուի 282բ էջում։ Այն վերաբերում է XIV դարի մի քանի նշանավոր վարդապետների մահվան ժամանակին։ Ժողովածուի և ժամանակագրական տեղեկությունների գրության ձեր տարբերվում է միմյանցից, այդ պատճառով ենթադրում ենք, որ № 84 ժողովածուի ընդօրինակությունից (1614 թ.) հետո, ուրիշները վերոհիշյալ տեղեկությունները մի որևէ վավերագրից մուծել են այնտեղ։ Ժամանակագրական հատվածի հեղինակի հարցը չկարողացանք պարզել, սակայն կարելի է ենթադրել, որ նա XIV դարի վերջին քառորդից առաջ ապրել չէր կարող։

Դ. Ժամանակագրական տեղեկությունները գտնվում են №№ 3854 ժողովածուի 206բ և 4231-ի 71ա էջում։ Ժամանակագրական այս հատվածը սկսվում է 846 թ. Գանձակի կառուցման և վերջանում 1338 թվին վերաբերող վկայություններով։ Տեղեկությունները խիստ համառոտ են, որի պատճառով հնարավոր չէ թեկուզ մոտավոր բան ասել ոչ նրա հեղինակի և ոչ էլ կազմելու ժամանակի մասին։ Սակայն հնարավոր է, որ վերջին վկայությունները դեպքերին ժամանակակից անձնավորություն արձանագրած լինի։

---

[1] „A cataloque of the Armenian manusckript in the British museum" London, 1913, p. 290—292.

[2] *Գ. Հովսեփյանը Մխ. Այրիվանեցու մահվան տարեթիվը պարզելու առնչությամբ օգտվել է ժամանակագրական այս հատվածից։ Հավանորեն տպագրական սխալի պատճառով հրատարակության մեջ «ՉՉՉ»-ի փոխարեն տպագրված է «ՉՄՉ» (տես Գ. Հովսեփեանց, «Մխիթար Այրիվանեցի», Երուսաղէմ, 1931 թ., էջ 15)։*

Ժամանակագրական սույն հատվածի խորագրի՝ «Վասն անցեալ աւուրցն» ձեր, մեզ ենթադրել է տալիս, որ նրա սկզբնական բնագիրը թերևս խորագիր չի ունեցել և որ վերոհիշյալ խորագիրն ամենայն հավանականությամբ դրվել է հետագայում, դրանով իսկ հասկացնել տալով, թե առաջարկվող տեղեկությունները վերաբերում են անցած օրերին։ Այս վկայությունները թեև խիստ համառոտ են, բայց և որոշ չափով վստահելի ու կարևոր տեղեկություններ են պարունակում։ № 4231 տարբերակի տարընթերցվածքները տրված են տողատակ։

Ե. Ժամանակագրական վկայությունները գտնվում են 1355 թ. ընդօրինակած ժողովածուի 147ա էջում (Ձեռագիր № 6938)։ Տեղեկությունները վերաբերում են 1457—1534 թվերին։ Վերոհիշյալ տեղեկությունները տվյալ ժողովածուի մեջ ընդօրինակվել են հետագայում, հավանաբար դեպքերին ժամանակակից մի անձնավորության կողմից։ Առաջարկվող վկայությունները խիստ համառոտ են, այդ պատճառով ոչ միայն հնարավորություն չունենք հեղինակի հարցը պարզելու, այլև նրանք ոչինչ չեն ավելացնում այլ աղբյուրներից մեզ արդեն հայտնի միևնույն փաստերին։ Կան վկայություններ էլ, որոնք ստույգ չեն, օրինակ Ջահանշահի սպանության տարեթիվը և այլն։

Զ. № 482 ժողովածուի 52բ, 54ա էջերում գտնվում են ժամանակագրական երկու փոքրիկ հատվածներ, որոնք ժողովածուի մեջ մուծվել են նրա երկրորդ գրչի կողմից և միանգամայն առանձին հատվածներ են։ Առաջին հատվածն (էջ 52բ) ընդգրկում է 1467 թվականից մինչև շահ Սեֆու (1629—1642 թ. թ.) ժամանակաշրջանը։ Երկրորդ հատվածն ընդգրկում է 1525 թվականից մինչև 1576 թվականի դեպքերը։ Երկու հատվածի նյութն էլ վերաբերում է Ակ-Կոյունլուների վերջին ներկայացուցիչներին և Պարսկաստանի Սեֆյան դինաստիայի մի շարք թագավորներին։

Է. Հալեպի հայերեն ձեռագրերի ցուցակում[1] գտնվում է 1311 թվից առաջ ընդօրինակված Սսի մայր Մաշտոցի նկարագրությունը։ Այդ նկարագրությունից իմանում ենք, որ Մաշտոցի դատարկ էջերում գտնվում է Կիլիկիայի մի շարք կաթողիկոսների ցանկը, որի մի մասն արձանագրել են իրենք կաթողիկոսները։ Տեղեկությունները վերաբերում են 1380 թվականից մինչև 1797 թվականին։ Բնագրում փակագծերում կատարված լրացումները պատկանում են ցուցակի հեղինակ Ա. Սյուրմեյանին։

Ը. № 1486 ժողովածուն ընդօրինակվել է 1597 թ. (էջ 196ա) հետագայում մեկ ուրիշը ժողովածուի 1ա էջում արձանագրել է օսմանական սուլթան Մուստաֆա I-ի երկրորդ անգամ գահ բարձրանալու հանգամանքները։ Տեղեկությունները վերաբերում են 1618—1622 թվականներին։

Թ. Համարի տակ գտնվում են երեք փոքրիկ տեղեկություններ, որոնք վերաբերում են պարսկական երեք թագավորների գահակալության տարեթվերին՝ 1629—1666։

Սույն տեղեկությունները գտնվում են № 3194 ժողովածուի վերջին պահպանակի վրա, որոնց գրության ձևը տարբերվում է ժողովածուի գրիչ՝ Ազարիայի գրության ձևից։ № 3194 ժողովածուն ընդօրինակվել է 1676 թ. այսինքն ժամանակագրական հատվածի վերջին վկայությունից 10 տարի հետո, նշա-

---

[1] «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի և Անթիլիասի ու մասնաւորաց» Բ հատոր, կազմեց Արտաւազդ արքեպիսկոպոս Սիւրմէեան, Հալէպ, 1936, էջ 31—32։

նակում է այդ տեղեկությունները № 3194 ժողովածուի մեջ մտել են նրա ընդ-օրինակությունից (1676 թ.) հետո, թերևս ժամանակակցի կողմից։

Ժ. № 745 ժողովածուի ընդօրինակությունից՝ 1607 թ. հետո, ուրիշները վերջինիս 193-րդ թերթի և սկզբի պահպանակի վրա ավելացրել են մի քանի տեղեկություններ, որոնք վերաբերում են 1654—1678 թ. թ. և արձանագրված են ժամանակակից տարբեր անձնավորությունների կողմից, հետևապես նրանք ստույգ են և վստահելի։ Առավել հետաքրքիր են Ճահուկի Շողակաթ և Երնջակի ս. Կարապետ վանքերի ու սրան հարակից շենքերի վերաշինման աշխատանքներին վերաբերող տեղեկությունները, որոնք զգալի չափով շեղվում են մեզ հայտնի վկայություններից։[1]

ԺԱ. Ժամանակագրության այս մի քանի տեղեկությունները, որոնք վերաբերում են 1679—1703 թ. թ., գտնվում են 1418 թ. ընդօրինակած № 5175 ժողովածուի VI թերթի վրա։ Կարծում ենք ժամանակագրական տեղեկությունները հեղինակի ժամանակակից դեպքերին են վերաբերում, նշանակում է նա XVII դարի երկրորդ կեսի և XVIII դարի սկզբի անձնավորություն է։

ԺԲ. № 615 ժողովածուի վերջին էջի՝ 59բ, վրա հավանաբար գրչի կողմից արձանագրված են պատմական մի քանի տեղեկություններ, որոնք չնայած ընդգրկում են բավական մեծ ժամանակաշրջան՝ 611—1654 թ. թ., սակայն շատ համառոտ են և բազմաթիվ այլ աղբյուրներից մեզ արդեն հայտնի։

ԺԳ. Սույն տեղեկություններն արձանագրված են № 7816 ժողովածուի վերջին էջի (43բ) ներքևի ձախ անկյունում, ժողովածուն ընդօրինակելուց հետո դեպքերին ժամանակակից ղարաբաղցի կամ գանձակեցի մի անձնավորության կողմից։ Վկայությունները վերաբերում են 1734—1758 թվականներին։

---

[1] Հմմտ. Մ. Սմբատեանց «Նկարագիր Ս. Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նոցա», Տփխիս, 1904, էջ 1—4։ Ա. վ. Սեդրակեան «Հնութիւնք հայրենեաց ի գաւառին Երնջակու», Վաղարշապատ, 1872, էջ 4—18։ Ալիշան, «Սիսական», էջ 378—380։

XXVII

Ա.

Համառաւա պատմութիւն ժամանակաց։

Եղև թափու�Երուսաղէմի և տիրեաց Գուննդուֆրէ տրպոյ- 290
լունն։[1]

Ի թվին ՇԾԱ (1102) վաղճանեցաւ պարոն Հայոց Կոստան-
5 զին, և էառ զիշխանութիւնն անդրանիկ որդին Թորոսն |||։[2]

Ի թվին ՉՀԲ (1323), գնաց տէր Կոստընդին կաթողիկոսն, 291
առ սուլտանն Մսրա |||։

Ի թվին ՊԼԷ (1388), ի մայիս ԺԸ (18) յանկաւ ի Քրիստոս
Թորոսն, որդի պարոն Օշին տուայ արուն ու պարոն աստուած
10 Ցակսբանց։

Ի թվին Հայոց՝ ՉԾԴ (1305) Ղևոն թագաւոր, որդի պարոն
Թորոսի, ի Քրիստոսի սուրբ ծնընդեանն աւրն ձիաւոր զիս զՀե-
թում և տուցն տէր ՅամբՈլա Հայոց։[3]

Ի թվին ՉԿԶ (1317) Աւշին թագաւոր յղրկեց զիս զՀեթու-
15 մրս, յառ բռէ Հռուպէրտն տաւորիրաներն բրինձնի և յԱնափլն։[4]

Ի թվին ՉՂԴ (1344) Կի թագաւորն Հայոց յղրկեց զիս զՀե-
թում ախտուցն տէր ՅամբՈլայս Հայոց, ի Կոստնդնուպոլիս վասն
իր թադուհէ (SIC), որ բերի ի յերկիրս, գնացի ի դեսպանութիւն,
նայ ոչ կամեցաւ դալ ի յերկիրս, կեցայ ի դուրս, ի յերկրէս,
20 ամիս Զ (6) դարձայ ու եկի յերկիրս։

Ի թվին ՇԺԴ (1064) բարձաւ թագաւորութիւնն Հայոց։[5]

Ի թվին ՊԼԱ (1382), ի հոկտեմբերի Ա (1) ազատեցաւ Լե-
վոն թագաւորն Հայոց ի Մսրայ ծառայութենէն, ու գնաց ի
Դագալանք։[6]

25 Ի թվին Հայոց ՊԾԴ (1404), դեքտեմբերի Է (7) օրն, ի
այշպակտաւ աաարն, ու սուտուն համազայի |||

Ի թվին ՊԺԸ (1369)-ն, ի մայի[ս] տմսուս Ի-ն (20) երեկ 292
Տարսոյ Նայիպն շուհ, որ է որդին, ի վրայ Սըսու, ի շաբաթ
օր, կռվեցան յուսինղիհն ու իրք մի վրեն չկարցին այնել՝ |||

30 Ի նոյն թիւս ՊԼԱ (1382), ի նոյեմբերի Ա-ն (1), յոա-
մատան ԺԴ (13), նստաւ Պտրևուին, սուլտան Մսրա։[7]

Բ

ՎԱՍՆ ԱՌԱՋԻՆ ԽԱՆՈՐԱՑ ՈՐ ՆՍՏԵԼ ԷՆ Ի ԹԱՎՐԷԶ 91ա

Երբ առաջին Թաթարն դուրս էրեկ Թիւն էր ՈՀ (1221),[8]
Երբ Մանգու ղանն երեկ Թիւն Զ (1251) էր,[9]
Երբ Արղուն ղանն նստաւ Թիւն ՉԴ (1254) էր,[10]
5 Երբ Հուլաւունն ‖ նստաւ Թիւն ՉԵ (1256) էր,[11] 91բ
Երբ Ղուլին փախեաւ Թիւն ՉԺԱ (1262) էր,[12]
Երբ Ապաղէն նստաւ Թիւն ՉԺԴ (1264) էր։
Երբ Բէրէնի դուրս էրէր Թիւն ՉԺԴ (1265) էր,[13]
Երբ Աբղունն ծնաւ Թիւն ՉԺԶ (1267) էր,[14]
10 Երբ Ահմատն նստաւ ՉԼԱ (1282) էր։
Երբ Արղունն նստաւ Թիւն ՉԼԴ (1284) էր։
Երբ Քեղաթուն նստաւ Թիւն ՉԼԵ (1286) էր։
Երբ Բահատինն նստաւ Թիւն ՉԽԵ (1296) էր։
Երբ Ղազանն նստաւ Թիւն ՉԽԷ (1298) էր։
15 Երբ Խաբբանդէն նստաւ Թիւն ՉԾ (1301) էր։
Երբ Բուսաիտն նստաւ Թիւն ՉԿԶ (1317) էր։
Երբ Ղուռումչէն Թալան արար ՉԿԸ (1319) էր։
Երբ Սուլթիրէն[15] նստաւ Թիւն ՉՂ (1341) էր։
Շխ Հասանն նստաւ Թիւն ՉՂԴ (1344) էր։[16]
20 Երբ Աշրաֆն նստաւ Թիւն ՉՂԶ (1347) էր։[17]
Երբ Վայիսն նստաւ ՊԸ (1359) Թիւն էր։[18] 92ա

Գ

ՎԱՐԴԱՊԵՏԱՑ [ՎԱԽՃԱՆ]ԻԼՆ[19] 282բ

Հանգեաւ ի Քրիստոս Ներսէս վարդապետն ի վանս Գլաձորոյ Թվին Հայոց՝ ՉԼԴ (1284) ի փետրվարի Զ (6)[20] ի փառս։
25 Վաղճանեցաւ սուրբ վարդապետն Մխիթար Այրիվանեցին Թվականիս մերոյ ՉՉԶ (1337) փետրվարի Ժ (10)։[21]
Յոհաննէս Որոտնեցին փոխեցաւ ի Քրիստոս Թվին ՊՀԵ (1426).[22] Ի նոյն աւր ծնեալ յորում վախճանեալ և այս է Կախիկ վարդապետն։ Եւ էր սայ գաւառաւ Որոտնեցի, յաշխարհէն Սիւնեաց, ի գեղջէն Վազատնոյ։
30 Վախճանեցաւ Զաքարիա կաթողիկոս Աղթամարցին Թվին ՊԽԲ (1393) յունիսի ԻԶ (26).[23]

Գ

ՎԱՍՆ ԱՆՑԵԱԼ ԱՒՈՒՐՑՆ[24] 206բ

Թիւն ՄՂԵ (846) շինեցաւ Գանձակ։[25]
35 ՆՂԵ (1046) շինեցաւ Հաղբատ և շարժն եկն։
ՈԺԱ (1162) առաւ Գվին։[26]
ՈԻԵ (1176) խաւարեցաւ արեգակն։

---

34 Թվին։ 35 եկն շարժն։ 37 ՈԻԱ փխ. ՈԻԵ։

ՈԼԴ (1184) ղերուսաղէմ ասին Տտճի[կ]քն։[27]

ՈԾ (1201) առաւ. Բ՚ինի։[28]

ՈԾԲ (1203) || առաւ. Տաւուշ։[29] 207ա

ՈԵ (1156) առաւ. Ականայ։[30]

5 ՈՀԴ (1225) սուլտանն եհար զԻւանի ի Դառնի։[31]

ՈՀԵ (1226) թաթարն երեկ և կալաւ. զՏակունք։[32]

ՈԶԱ (1232) թաթարն եաւ ըզԳանձակ։[33]

ՈԶԵ (1236) թաթարն երեկ ու. ծածկեաց զաշխարհս և կա-
լաւ զԱւազն ի Կայնի։[34]

10 ՉԿԸ (1319) երեկ Ղուռումչին։[35]

ՉՀ (1321) շարժն երեկ։

ՉՀԵ (1326) Զաւպանն գնայ ու. չերեկ։[36]

ՉՉԴ (1335) Մուսայիթն մեռաւ աշունն։[37]

ՉՉԷ (1338) Թամուրթաշն երեկ։

Ե

15 ՋՋ (1457) եկեալ է շարժն յԵզրնկան։[38] 147ա

ՋԺԲ (1463) սպանել է Հասան պակն զՃիանշան։[39]

ՋԻԴ (1474) կոտորեց խուանզքարն Ըզհասան պակն։[40]

ՋԼԱ (1482) եկաւ կրկին շարժն յԵզրնկայն։[41]

ՋԽԷ (1498) եկաւ մահ սաստիկ։

20 ՋԽ (1491) գեղով մեռաւ Աղուպ փտթշահ։[42]

ՋԾ (1501) եկաւ շահ Իսմայիլն։[43]

ՋԿԴ (1514) Սելիմն կոխեց զշահն։[44]

ՋՉԴ (1534) եկաւ Սուլեմանն։[45]

Զ

Ի թվին ՋԺՋ (1467) Ուզուն Հասան Ալի անուն, որ էր ի 52ր
25 Վան քաղաք զիւր հայրն եսպան՝ զՃհանշահն և ինքն՝ Ուզուն
Հասան նստաւ ի թախտն։[46]

Ի թվականին ՋԺԵ (1466) Ճիանշահն տիրեաց բազում աշ-
խարհաց և գաւառաց բռնութեամբ իւրովի կամօք մինչև ի Խո-
րասան։

30 Ի Քրիստոսի թվականէն ՌՇՀԵ (1575) շահ Թահմազն յայտ-
նեցաւ և յառաջեաց, և էր շահ Իսմայէլն ի Ղահղահ բերթն ի
բանտի, ի դուրս եկն, և ել ի թախտն և թագաւորեաց։ Եւ դու-
հուր եղև Խուտապանտին և նստաւ թագաւոր։[47]

Ի նոյն թվականին ՌՇԶԵ (1585) Ամիր Համզան ի թախտն
35 ել և Գ (3) ամ թագաւորեաց։[48]

Յարաբչութենէն ՅՋԿԹ (6969) ամին և ի մարդեղութենէ
աստուծոյ բանին ՌՇԽԶ (1546) ամին, և ի թագաւորութեան
կողման հիւսսո և արևելից շահ Թահմազին,[49] որդւոյ Իսմայէլի,

---

1 տտճկունք։ 3 Տաւշ։ 5 զևանի սուլտանն եհար ի Գառնի։ 6 թաթար, զտաճ-
կունք՝ փխ զՏակունք։ 7 էառ։ 8 և ծածկեաց փխ. ծածկեաց։ 9 զԱւազն, Կայէն։ 10 ՉԿԸ
էր, Ղուռումչին երեկ։ 11 ՉՀ էր որ փխ. ՉՀ։ 12 ՉՀԵ էր որ Զաւպանհանն գնաց և այլ
չերեկ։ 13 ՉՉԴ էր Գուսայիթն։ 14 ՉՂԷ էր որ Գամուրտաշն։

որդւոյ Հայատրի, վասն որոյ ամենեքեան հաւանեալ կացուցին զնա թագաւոր ի տեղի Եղուպ թագաւորին։ Այս Իսմայէլն ծնանի զշահ Թահմազն և նա զշահ Իսմայել և զԽուտապէնտին և Խուտապանտին զշահ Ապասն և շահ Աղասն եղեալ թագաւոր
5 զթոռն իւր զՍէֆի միրզէն։

* * *

Թվականին ՋՀԴ (1525) շահ Թահմազն եղաւ։ 64ա

Թվականին ՌԻԴ (1575) մեռաւ Թահմազն թագաւորեալ ամս ԾԱ (51)։

Թվականին ՌԻԵ (1576) նոտաւ շահ Իսմայէլն և սպան զիւր
10 Է (7) եղբարսն։ Թօխմախ սուլթան և Ամիրխան անուն իշխան մի սպանին զշահ Իսմայէլն. և ասացին սուտ՝ թէ լրտես է գնացեալ։ Եւ յետոյ իմացեալ ամենացուն և գնացին ի Խորասան և բերին զոմն Խուտաբանաայ անուն շեխ գոլով՝ եղբայր շահ Իսմայէլին և որդի նոյն շահ Թահմ[ա]զին, որ է յառաջմէ կարգեալ։
15 Թվականին ՋԽ (1491) Եղուպ խանն սպանաւ յազգէ Բայինտուրին և այլք զմիմեանս կոտորեցին։ Եւ թագաւորեաց վրաց Ղօրղօր,[50] ԼՌ (30000) մարդով եկեալ ի վերայ Ցարզրումու յաւարի, էառ զերկիրն և հարկատու արար զքաղաքն։ Եւ էր ի թագաւորութեան վրաց Կոստանդնոյ[51] և ի կաթողիկոսութեան Հայոց աեառն Սարգսի։[51]ը

Ի

31 (ԱԴ էջ 136՝ դատարկ էջի մը վրայ.)

Ի նուաստ ի Թորոս կաթողիկոս (կարմիրով) Սրսցի նըստաւ յաթոռ հայրապետութեան ի թըւականութեանս Հայոց ՋՂԷ (1548) փետրվարի ԺԲ (12), աւրն երեքշաբթի։

25 Ի նուաստ և անպիտան Աղարիայ վարդապետ Զուղայեցի, շնորհաւքն աստուծոյ կաթուղիկոս նոտաւ յաթոռ հայրապետութեան Սրսայ ի թվականիս Հայոց ՌԼԴ (1584) փետրվարի ԻԵ (25), աւրն երեքշաբթի, Ղևոնդեանց տաւնի մեծ բարեկենդանին։

Ես նուաստ Յովհաննէս վարդապետ Անթըպցի շնորհաւք և
30 ողորմութեամբն աստուծոյ նըստա աթոռ հայրապետութեան Սրսայ, ի մեծ թվին Հայոց ՌԾԱ (1602), դեկտեմբեր Հոռոմոց Ի (20), աւուր կիրակէի։

Ես նուաստ Սիմէոն կաթողիկոսըս Սեփասացի շնորհեաւքն և ողորմութեամբն աստուծոյ, նստա յաթոռ հայրապետութեան
35 Սրսայ, ի մեծ թվին Հայոց ՌՁԲ (1633) ձեռամբ նուաստ (շարունակությունը մեկ տող ծածկագիր և անհասկանալի)։

Դ էջ 210՝ դատարկ էջի մը վրայ։

Նուաստ Խաչատուր կաթողիկոս նստաւ յաթոռ հայրապետութեան ի Սրս թվին Ռ (1551)։

40 Նուաստ Խաչատուր կաթողիկոս նստաւ յաթոռ հայրապետութեան Սրսայ թվն՝ ՌԹ (1560), փետրվարի ԺԶ (16)։

Փետրվարի Դ (4) թվ. ՌԼԴ (1584) առ Քրիստոս փոխեցաւ, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի, ամէն։

Նուաստ Տիրատուր կաթողիկոս (սրբուած) նստաւ յաթոռ հայրապետութեան Սսա. թվ. ՌԼԵ (1586) մարտ ամսոյ Ի (20)։

5 Նուաստ Բերիացի Պետրոս կաթողիկոս նոտաւ յաթոռ հայրապետութեան ի Սիս թվ. ՌՃԾԷ (1608) ապրիլ ԻԹ (20), օր հինկշաբթի։

Նուաստ Թորոս կաթողիկոս Սբսեցի՝ նստաւ յաթոռ հայրապետութեան ՌՄԼԴ (1784), և փոխեցաւ առ Քրիստոս ՌՄԽԵ

10 (1796) սեպտ. ԻԴ (24) յօրն, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

Նուաստ Կիրակոս կաթողիկոս նստայ յաթոռ հայրապետութեան, որ եմ եղբօր որդի վերոգրեալ Թորոս սրբազան կաթողիկոսին ՌՄԽԶ (1797) փետր. ԺԴ (14) յաւուր Տեառնընդառաջի։

15 Զ էջ 434, Նուաստ Կոստանդին կաթողիկոս գտայ ղշաբաղրութիւնս հայրապետացն Հայոց ղբրեալ ձեռամբ սուրբ հաւրն մերոյ Ներսիսի արքեպիսկոպոսի Տարսոնի, և ետու գրել ասա, որ է այս ՌԾԹ (1610)։

32 ի մեծ թուիս Հայոց ՊԻԹ (1380) ամի յաւգոստոս ամսոյ ԺԵ (15) ի չորեքշաբթի աւր, հանգաւ ի Քրիստոս պատուական հայրապետն Հայոց տէր Կոստանդին երկրորդ Լամբրոնայցին, որոյ յիշատակ նորին աւրհնութեամբ եղիցի։

Նուաստ Յոհանէս կաթողիկոս նստայ ի յաթոռ հայրապետութեան ի թվականիս Հայոց՝ ՉԼԵ (1486)։

25 Նուաստ Յոհանէս կաթողիկոս Թուլկուրացանլնյի (SIC) նստայ ի յաթոռ հայրապետութեան ի թվականիս Հայոց ՉԼԸ (1489), յունվար ամսոյն ԻՉ (26), աւր չորեքշաբթի։

Ը էջ 436. Նուաստ Յովհաննէս կաթողիկոս ամենայն Հայոց նստայ յաթոռ հայրապետութեան ի Սիս քաղաք թվին Հայոց ՉԼԴ (1525), մայիս ամսոյ Ա (1), աւրն երկուշաբթի։

30 Նուաստ Սիմեւոն կաթողիկոս Զէթունցի նստայ յաթոռ հայրապետութեան ի Սիս քաղաք։ թվին Հայոց ՉՉԸ (1539), ապրիլ է (7), աւրն երկուշաբթի։

Նուաստս Ղազար կաթողիկոս երկրորդ Զէթունցիս նստայ

35 յաթոռ հայրապետութեան ի Սիս քաղաքին, որ եմ հաւրեղբաւր որդի Սիմէոն կաթողիկոսին, թվին Հայոց ՉՂԴ (1545) յիշեցէք ի յաղաւթս ձեր։

Ը

Թվին ՌԼԱ (1622) մայիս ամսոյ Թ (9), աւրն հինգշաբթի, 1ա
սուլթան Մուսթաֆտն ելաւ ի հոր զուլայէն ե ուրբաթ աւուր ի

40 թախտ նստաւ, մայիս Ժ (10) աւրն և երեկոյ ժամուն, զեղբաւր որդին զՈսման թագաւորն խեղթեաց ձեռամբ Տաւսէթ փաշա զաւրավարին իւրոյ, որ անիրաւութեամբ և բռնութեամբ տիրեալ էր զտեղ հաւրեղբաւր իւրոյ։ Թվին ՌԿԷ (1618) փետրվար ամսոյ ԺԶ (16) նստեալ մինչ ՌԼԱ (1622), Դ (4) ամ անցաւ Գ

(3) ամիս,[52] տարն բարձաւ ի միջոյ և ապագայն տեառն կամք աւրհնեալ լիցի։

Թ

Շահ Սաֆի թագաւոր նստաւ ԺԸ (18) տարեկա[ն էր]։ Թվին ՌՀԸ (1629) ԺԴ (14) տարի թագաւորեաց։[53]

5 Շահ Աբասն՝ Փոքրն, թագաւոր նըստաւ ԺԴ (14) տարեկան էր. Թվին ՌՂԱ (1642)-ուն, ԻԵ (25) տարի թագաւորեաց։[54]

Շահ Սլեման թագաւոր նստաւ Ի (20) տարեկան էր. Թվին ՌՃԺԵ (1666)։[55]

Ժ

Առաջին պանպանակ։

10 Ի Թվին ՌՃԴ (1654) օգոստոսի Բ (2), մարերի ԻԸ (28) Ճահկայ սուրբ Շողակաթն կու շինէինք, աւուր չորէքշաբթի ի մէջօրէի արեգակն խաւարեցաւ յօգուտ (?) ժամս մինչ՛զի աստեղք երևեցան վասն իմ մեղացն։[56]

Ի Թվականութեանս մերոյ ՌՂ և Դ (1644) արկաւ հիմն 192ա
15 սուրբ Կարապետիս Երընջակայ, և ի ՌՃԺ և Բ-ն (1663) աւրհնեցաւ ի Խաչ գիւտի աշնան եղանակին։[57] Իսկ սրահն և գաւիթն ի ՌՃԺ և Դ (1664) ամին հիմնարկեցաւ, և ՌՃԺ և հնգին (1666) կատարեցաւ ի հոկտեմբեր ամսոյ Ժ (10) նաւասարդի Հայոց Ե (5)։ Աւարտեցաւ հարաւային կողման մեծ քոչքն ի Թվին ՌՃԺԴ (1665)։
20 Ի ներքուստ հիմնարկաւ և ի Թվին հազար ՃԺ և Զ (1667) կատարեցաւ[57ա] հոկտեմբերի ԺԵ (15), նաւասարդի ԺԱ (11), ձեռամբ ուստայ Յովանիսին։

Ի Թուին ՌՃԻԸ (1679) յունիսի ամսոյ Դ (4) աւուր չորեք- 193բ
շաբթի ի հինգերորդ ժամուն մեծասաստ շարժ եղև, մինչ զի
25 կանթեղաց ձէթն և ջուրն ի միասին հեղաւ ի Սէվան կղզոյ յեկեղեցիսն, տէր Յիսուս ազատեսցէ զմեզ յամենայն վտանկից,[58] ամէն։

ԺԱ

Թվին ՌՃԻԸ (1679) մայիս ամսոյ աւո[ւր]ն Դ (4), չո- 6ա
րէ[քշաբթի] շարժ եղև Երևան։[59]

30 Սուրբ Գեղարդայ եկեղեցոյ շինումն Թվին ՌՃԽԷ (1698)։[60]

Ստեփան[ոս] կաթող[ի]կոսի մեռանելն Թվին ՌՃԽԷ (1698)։[61]

Թվին ՌՃԽԸ (1699) ճողոցն սելաւ եկաւ տարաւ գեղ։

Թվին ՌՃԽԸ (1699) դարպասին ձեռն տըւինք, սայկայն կատարած աստուծոյ է դիտելի։

35 Թվին ՌՃԾԲ (1703) եկաւ ||| [62] օրն շ[ա]բ[աթ] տնորենյս 6բ
Քաբլ Հասան խանն։

ԺԲ

ԲԱՆՔ ՆՇԱՆԱԿՈՂՔ ԹՈՒԱԿԱՆԱԻՆ ՀԱՅՈՑ

39բ

Ի Հայոց Կ (611) թուին երևեցաւ Մահմետ։

ԱՃՀԱ (722) թուին Յոհան Օձնեցին պայծառացաւ. ի Հայս։

ՅԽԱ (892) թուին տէր Մաշտոցն պայծառանայր։

5 ՆՀԼ (1029) թուին եղև արձակումն սատանային։

ՇԱ (1052) թուին տէր Պետրոս կաթուղիկոս Գետադարձն պայծառացաւ։

ՇԺԴ (1064) թուին բարձան թագաւորք ի քաղաքէն Յանուց։

ՊԼԶ (1387) թուին Լանկ Թամուրն եկաւ. ի Սմրղանդայ։

10 ՋԲ (1453) թուին Օսմանլուն էառ զՍտամպօլ ի Յունաց։

ՌԻԴ (1575)-ին նստաւ ի թախտ սուլթան Մուրադն։

ՌԻԹ (1580) թուին ի թախտ նստաւ մեծ շահ Աբասն Պարսից։

ՌՀԵ (1626)-ին ի սոյն առաջնոյ շահ Աբասէն Ն՞ովսէս վար-

15 դապետն էառ զհրաման լուսաբարութեան սրբոյ Էջմիածնի։

ՌՃԴ (1654) թուին ի սուրբ Էջմիածնայ զանգակատուն հիմն արկին։

ԺԳ

ՌՃԶԴ (1734) թվին եկաւ Նադիր շահն Դանջու վերան, աշ- 43բ

նան ժամանակին էր, որ եկն։

20 ՌՃԶԷ (1738) թվին Իպրահիմ խանն սատկացրին, ճռուճն՝ (?) էլ աշնանն։

ՌՃՂԴ (1745) թվին գարնան ժամանակն եկաւ Սաբսանկոփն, գնաց Նատիր շահն ԳՃՌ (300000) զօշունով։

ՌՃՂԸ (1749) թվին Փանահն էսպան, մէլիք Ալլաղուլին՝

25 սեպտեմբեր ամս[ե]ան։

ՌՃՂԹ (1750) թվին մէլիք Թամրազն սպանեցին մայիս ամսուն։

ՌՄԷ (1758) թվին Փանահ խանն [Դան]ջայ առաւ սուրբ Խաչին ժամանակն։[63]

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հեղինակը նկատի ունի խաչակրաց առաջին արշավանքի ժամանակ Գոտֆրիդ Բուլոնացու կողմից Երուսաղեմի գրավումը 1099 թ. հուլիսի 15-ին։ (Տես և հմմտ. III ժամանակագրություն, էջ 74, էջ 90, ծանոթ. 7։

2. Տես և հմմտ. III ժամանակագրություն, էջ 75, էջ 90, ծանոթ. 9։

3. Սույն և հաջորդ վկայությունների հեղինակը Նզրի տեր Հեթումն է, Կոստանդին պայլի թոռը, որը Հեթում Բ-ի եղբոր որդի, Լևոն Գ թագավորի սենեկապետն էր և խնամակալը։ Այս վկայությունից իմանում ենք, որ Հեթումն ասպետ է կարգվել 1305 թ. հունվարի 6-ին։ Ալիշանի կարծիքով Հեթումը սենեկապետ է եղել 1308—1325 թ. թ. («Սիսուան», էջ 485)։

4. Բրիտանական թանգարանի հայերեն ձեռագրերի ցուցակի հեղինակը բնագրի «յառ ըռէ ըՌուպերտն տուառիրաներ Բրինձի յԱնափալն» հատվածը թարգմանել են. „to Rē (Roi) Rupert tvarīraner Brinds (Prince) in Anaphi (? Naples)" (էջ 219) ձևով։ Ընդգծված բառը աղճատված և կասկածելի է թվում։

Ձեռագիր բնագիրը չունենալով ձեռքի տակ, մի շարք անհասկանալի բառեր բերում ենք այնպես, ինչպես հրատարակության մեջ է։

5. Բնագրում դրված է «Թագուհին հայոց» (էջ 291) ձևով։ Կարծում ենք պետք է լինի «Թագաւորութիւնն Հայոց»։

6. Խոսքը վերաբերում է Կիլիկիայի վերջին թագավոր Լևոն Ե-ի եգիպտական գերությունից աղատվելուն և Իսպանիա մեկնելուն (հմմտ. Բասմաչեան Կ. Յ. «Լևոն Ե Լուսինեան վերջին թագաւոր Հայոց», 1908 թ., Պարիզ, էջ 72։ Լևոնի գերության և գերությունից աղատվելու մանրամասնությունները տես անդ. էջ 56—73)։

Բնագրի «Գաղալանքը» Արագոնիան է, Իսպանիայի հյուսիս արևելյան մասում, տարածված Կաստիլիայի և Կատալոնիայի միջև։ Մարտինոս Լեհացու Հռոմի պապերի և կայսրների ժամանակագրության հայերեն թարգմանության բնագրում կարդում ենք. «Ի սորին քահանապետութեանն յամն առաջին (Հոնորիոս IV պապ, 1289 թ.— Վ. Հ.), Ֆիլիպ թագաւորն Ֆրանցիոյ, որդի Լոգովիկոսին, որ և սուրբ յեռաս, բազմութեամբ զօրօք գնացեալ եմուտ ի յերկիրն Արտկունիս, որ և Գաղալանք ասի»։ (Ձեռ. № 2037, էջ 64ա)։

7. Խոսքը վերաբերում է մամլյուկների Բուրջի դինաստիայից Զահիր Սեյֆ-ադ-դին Բարկուկ սուլթանին, որն իշխել է 1382—1389 թ. թ.։

8. Հեղինակը նկատի ունի մոնղոլների առաջին արշավանքը դեպի Անդրկովկաս։ Սակայն այն տեղի է ունեցել 1220 թ. (տես I ժամանակագրություն, էջ 26, 29, ծանոթ. 28)։

9. Մանգու ղանը ըստ Լեն-Պուլի իշխել է 1251—1257 թ. թ.։ Սակայն Բարտոլդը հավաստի համարում է 1251—1259 թ. թ. (էջ 177)։

10. Խոսքը հավանաբար վերաբերում է Հայաստանում աշխարհագիր անցկացնող Արղունին (հմմտ. Կ. Գանձակեցի, էջ 348)։

11. Հուլավյանների, կամ ինչպես Լեն-Պուլն է անվանում պարսկական մոնղոլների թագավորության հաջորդական կարգը տես VI ժամանակագրություն, էջ 118, 121։

12. Հեղինակը նկատի ունի 1262 թ. աշնանը Հուլաուի և Բերկեյի միջև տեղի ունեցած պատերազմը և վերջինիս զորավարներ Նոխայի, Ղուլի և այլոց պարտությունը։ Մանրամասնությունները տես Ռաշիդ-ադ-դինի էջ 58—60, Կ. Գանձակեցի, էջ 378—380։

13. Խոսքն արդյո՞ք չի վերաբերում Ոսկե Հորդայի իշխող Բերքեյին, տես և հմմտ. Ռաշիդ-ադ-դինի էջ 6։ (Կ. Գանձակեցի, էջ 380—382)։

14. Արղունի ծնունդը սխալ է ցույց տրված, համաձայն Ռաշիդ-ադ-դինի նա ծնվել է 1234 թ. մարտին, (էջ 64)։

15. Աբու Սայիդի քույրը՝ Սաթի բեկ, տես էջ 121, ծանոթ. 14։

16. Տես և հմմտ. վերևում, էջ 142, էջ 150, ծանոթ. 17։

17. Տես և հմմտ. վերևում, էջ 142, էջ 121, ծանոթ. 16։

18. Տես վերևում, էջ 118, էջ 121, ծանոթ. 18։

19. Վերնագիրը բնագրում գրված է կարմիր թանաքով։

20. Խոսքը վերաբերում է Մխիթար Սասնեցու ուսուցիչ Ներսես Մշեցուն, որը հայտնի է նաև Տարոնեցի անունով։ Օրմանյանը Ներսես Մշեցուն և Ներսես Գլաձորեցուն համարում է տարբեր անձնավորություններ («Ազգապատում», էջ 1696), կարծում ենք, որ ընդհակառակը, նրանք միևնույն անձնավորություններն են։ Հմմտ. «Ազգապատում», էջ 1862։ Սույն տեղեկությամբ հաստատվում է Ալիշանի կարծիքը («Սիսական», էջ 131, հմմտ. Գ. Հովսեփեան, «Մխիթար Սասնեցի», Վաղարշապատ, 1899, էջ 6)։

21. Ժամանակագրության վկայությունը վերաբերում է ոչ թե պատմիչ Մխ. Այրիվանեցուն, որը մահացել էր դրանից երեք տասնյակից ավել տարիներ առաջ՝ 1289—1291 թ. թ. շրջանում (Գ. Հովսէփեանց, «Մխիթար Այրիվանեցի», էջ 15), այլ Մխիթար Սասնեցուն (նույն տեղ, էջ 15)։ Հմմտ. Օրմանյան, «Ազգապատում», էջ 1862)։ Մխիթար Սասնեցու աշակերտ Մկրտչի տեղեկությամբ, որը դրել է իր ուսուցչի կենսագրությունը, նա մահացել է 1337 թ. փետրվարի 13-ին շաբաթ օրը («Մխիթար Սասնեցի», էջ 26—32)։

22. Եթե ժամանակագրության տարեթվի մեջ չկա աղճատում, նշանակում է այն սխալ է։ Հ. Որոտնեցու մահը ընդունված է դնել 1388 թ. ներքո («Ազգապատում», էջ 1979։ Ա. վ. Սկրտչեան, «Հնութիւնք Հայրենեաց ի գաւառին Երնջակու», Վաղարշապատ, 1882, էջ 11։ Ալիշան, «Սիսական», էջ 378)։ Այդպես էլ նրա գերեզմանաքարի վրա գրված է. «Այս դամբարան պետին Լ և Մեծին Յովհաննու Որոտնէի, ՊԼԷ (1388), Սմբատեանց, «Նկարագիր Ս. Կարապետի վանից Երնջակայ...», Թիֆլիս, 1904, էջ 362։

Հակառակ այս ցուցումին, մատենագրական մի շարք վկայություններ բոլորովին այլ տեղեկություններ են տալիս։ Այսպես ժամանակակիցներից՝ Գր. Խլաթեցին «Յիշատակարան աղէտից» (Վաղարշապատ, 1897), չափածո աշխատության մեջ Որոտնեցու մահը դնում է 1386 թ. ներքո. «Ի յութ հարիւր Հայոց թուական

Ընդորս և հինգ եօթն յաւելան (1386 թ.),
Յունուարի մին պահք Յայտնութեան
Լոյս արևուն խաւարեցան։
Մեծ վարդապետն անուն Յոհան,
Որ և Կախիկ անուն ծնրնդեան,
Յեա վեց աւուրն խաւարման
Փոխի աս Տէրն իւր սնժամական» (էջ 1—2)։

Թ. Մեծոփեցին ևս հաստատում է Գր. Խլաթեցու վկայությունը («Պատմութիւն Լանկ-Թամուրայ...», Փարիզ, 1860, էջ 13—16, 55—56։ Հմմտ. Կիրակոս Ռշտունցու վկայության հետ, էջ 118)։

Եթե վերջին վկայությունների մեջ չկա որևէ աղճատում, արդյո՞ք հավանական չի լինի, եթե ենթադրենք, որ Հ. Որոտնեցու գերեզմանաքարի վրա գտնված տարեթիվը վերաբերում է ոչ թե Հ. Որոտնեցու մահվան տարեթվին, այլ գերեզմանաքարի կանգնեցման տարեթվին։ Կարծում ենք ժամանակագրության սկզբնական բնագրում Հ. Որոտնեցու մահը դրված է եղել ՊԼԵ թվականի ներքո, որը աղճատման հետևանքով դարձել է «ՊՀԵ»։

23. Հմմտ. «Նոտարք Հայոց», էջ 1։ Այս վկայությամբ վերջանում է ժամանակագրական սույն հատվածը և ժողովածուն։

24. Բնագրում վերնագիրը գրված է կարմիր թանաքով։

25. Հեղինակը նկատի ունի Գանձակի հիմնադրումը։ Այս կապակցությամբ Մ. Կաղանկատվացին գրում է. «Երկերիւր և ութսուն էր թուականն Հայոց (ամ տեառն 831), յորժամ կամեցաւ Մումին Տաճիկ շահատակել ի Հոռոմս ... Իսկ յետ երից ամաց Բաղդղի ոմն Ամիրայ եկեալ հրամանաւ իշխանին Տաճկաց, Ամիր Մումին կոչի, և հասեալ ի Նախիջևան քաղաք՝ ... յետ այսորիկ անցուցելոյ երկուց ևս ամաց, եկն Խազը Փաղոս այր շամշոտ և անողորմ, և ի նմին ամի սատակեցաւ, իսկ Նորուն որդին եկեալ էառ զաշխարհս սրով և գերութեամբ և զեկեղեցիս բազումս հրով այրեալ կիզեաց՝ և գնաց ի Բազդատ։ Եւ անտի դարձեալ եկեալ արքունի հրամանաւ և գանձուք չինեաց զԳանձակ քաղաք յԱրշակաշէն գաւառի» («Պատմութիւն Աղուանից աշխարհի», Մոսկվա, 1860, էջ 265)։ Այսպիսով, եթե ընդունենք, որ արաբ Խազ Փատղոսի որդին միևնույն տարին գնացել է Բազդատ և ապա եկել ու կառուցել Գանձակը, այն դեպքում վերջինիս կառուցումը կընկնի 836—837 թվականին։

26. Խոսքը վերաբերում է Վրաց թագավոր Գեորգիի կողմից Դվինի գրավմանը, որն ինչպես վկայում է Ս. Անեցին, տեղի է ունեցել Հայոց ՈԺԱ (1162) թվի օգոստոսի 21-ին (էջ 137)։ Մ. Ուռհայեցին ամիսը և տարեթիվը չի նշում (էջ 429)։

27. Խոսքը եթե վերաբերում է Սալահեդդինի կողմից Երուսաղեմի գրավմանը, ապա այն տեղի է ունեցել 1187 թ. (Հայոց ՈԼԶ)։ Այս մասին տես էջ 92, ծանոթ. 28։

28. Հեղինակը նկատի ունի Զաքարեի և Իվանեի կողմից Բշնիի գրավումը։ Այս մասին տես էջ 52, ծանոթ. 13։

29. Տավուշն այժմյան Թոուզ գյուղն է իր շրջակայքով, պատմական Արցախում։ Խոսքը վերաբերում է Տավուշի և այլ վայրերի Զաքարյանների գրավմանը։ Կ. Գանձակեցին առանց ժամանակը հիշելու գրում է. «Այսպէս և միւս իշխանն, Զաքարէ անուն, և եղբայր իւր Սարգիս, Հայրն Շալուէի և Իւանէի ազգականք մեծ իշխանացն, ձեռնտուութեամբ Նոցին, առին և նորա բազում գաւառս ի Պարսից, և զբերդս ամուրս զԳարդման, զՔարհերդ, և զԵրգեվանք, զՏաւուշ, զկածարեթ և զՏէրունականն, զԳաղ, և զՇամքոր քաղաք...» (էջ 154—155)։

30. Այս տեղանունը Ստ. Օրբելյանը հիշում է Հաբանդ գավառում (էջ 517)։ Կ. Գանձակեցին այն ես հիշում է, սակայն այլ առիթով «... և ետ (Բաթու ղանը— Վ. Հ.) ի նա (Հասան Ջալալին— Վ. Հ.) զհայրենիքն իւր զՁարարեւրդ և զԱկանայ և զԿառկառն, զոր ճանեալ Լին յառաջագոյն ի նմանէ ազգն բուրֆաց և վրաց» (էջ 345. ընդգծումը մերն է— Վ. Հ.)։ Եթե նկատի ունենանք վերոհիշյալ վկայության ընդգծված հատվածը և այն լրացնենք Ստ. Օրբելյանի «Որք (Զաքարեն և Իվանեն— Վ. Հ.) բաղում չանիւ թափեցին զաշխարհս Հայոց ի Պարսից և առին յԱռանայ մինչև ցներքին Բասեն և ի Բարկուշատայ մինչ ի Մժնկերտ։ Առին զԿարս, զվաղարշապատ, զԿաղզվան, զՍուրբ Մարի, զԱնի, զԱնբերդ, զԲշնի և զԳառնի, զԴվին մայրաքաղաք, զԳարդման, զԳանձակ, զՁարէք, զՀերթ, զՇամքոր, զՇարի, զՊարտաւ, զՁարաբերդ» վկայությամբ (էջ 391—392), ապա կարող ենք եզրակացնել, որ Զաքարյանները Ձարարերդի հետ գրավել են նաև Ականան։ Եվ որովհետև այս գրավումները համաձայն Ստ. Օրբելյան, տեղի են ունեցել մինչև 1211 թ. (էջ 392), ուրեմն բնագրում Ականայի գրավման տարեթիվը հավանորեն աղճատված է՝ «ՈՄԵ (1206) թ. փոխարեն այն մեզ հասել է «ՈՆԵ» (1156) ձևով, մասնավորապես եթե նկատի ունենանք, որ ժամանակագրական այս հատվածում միայն սույն վկայության տեղն է խախտված։

31. Ջալալեդդինի արշավանքը Հայաստան։ Տես էջ 39, 56, ծանոթ. 36։

32. Մեզ անծանոթ վայր։ Թերևս ճիշտ է № 4231 տարբերակի պահած «զՏաճկունք» ձևը։

33. Տես և հմմտ. էջ 26, էջ 30, ծանոթ. 30։

34. Խոսքը վերաբերում է 1236 թ. մոնղոլների Հայաստան արշավելուն։ Տես էջ 26, 30, ծանոթ. 31։

35. Մոնղոլ զորավար. Ստ. Օրբելյանը նրան համարում է «հազարապետն» (էջ 469), կամ «զօրաղլուխք Ջաւիանն և Խուռումչին» (էջ 476)։ Տես և հմմտ. էջ 118։

36. Տես էջ 100, ծանոթ. 135։

37. Բուսայիթ (Աբու Սայիթ) վախճանվել է 1335 թ. Նոյեմբերի 30-ին։ Տես էջ 110։

38. Համաձայն Վարդան Բաղիշեցու վկայության, վերոհիշյալ երկրաշարժը տեղի է ունեցել ոչ թե 1457 թ., այլ 1458 թվին։ (Տես «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ժ, էջ 71)։

39. Ինչպես արդեն ցույց ենք տվել Ջհանշահը սպանվում է 1467 թ. (տես վերևում, էջ 175, ծանոթ. 14։

40. Խոսքը վերաբերում է Ակ-Կոյունլու Ուզուն Հասանի և Մուհամմադ Բ-ի միջև տեղի ունեցած պատերազմին, որի ժամանակ Ուզուն Հասանն իրոք պարտվեց։ Ժամանակագրության սույն վկայությունը հաստատում է XI ժամանակագրությունը (էջ 168—169)։

41. Հմմտ. Վարդան Բաղիշեցի («Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ժ, էջ 71)։

42. Հայկական աղբյուրները Ցաղուրի մահը սովորաբար դնում են 1491 թ. Ներքո (հմմտ. Ալիշան «Այրարատ», էջ 330), համաձայն Լեն-Պուլի հաշվումների, այն տեղի է ունեցել 1490 թ.։

43. Խոսքը վերաբերում է Իսմայիլ I-ի և Ակ-Կոյունլու Ալվանդի (Էլվենդ) Հայաստանում մղած կռիվներին։ Տես Բարսեղ Արճիշեցու (էջ 126—127) և Հակոբ Կարնեցու (էջ 239) ժամանակագրությունը։

44. Տես X ժամանակագրություն, էջ 156, 163, ծանոթ. 4։

45. Խոսքը վերաբերում է սուլթան Սուլեյմանի (1520—1566 թ. թ.) և շահ Թահմազի (1524—1576 թ. թ.) միջև տեղի ունեցած 1530-ական թ. թ. կռիվներին։ Ժամանակագրության վկայությունը վերաբերում է Սուլեյմանի դեպի Հայաստան կատարած 1534 թ. արշավանքին։

Հմմտ. Հովհաննես քահանա Արճիշեցու հիշատակարանի («Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ժ, էջ 19—30) և ժամանակակից այլ հիշատակարանների հետ (Տաշեան «Ցուցակ հայերէն ձեռագրաց», Վիեննա, 1895, էջ 433 Բ. Սարգսեան «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց», հատոր երկրորդ, Վենետիկ, 1924, էջ 1172—1174 և այլն։

46. Ն 482 ժողովածուի մեջ սույն վկայությունը նախորդում է մի փոքրիկ պատմություն (էջ 52բ) «Սկիզբն թագաւորութեան Կարմրագլխին, որք են Ղզլպաշբ» խորագրով։ Այստեղ թված է թագավորների անունները միայն, առանց տարեթվերի։ Վերոհիշյալ պատմությունը տեղ է գտել Ա. Դավրիժեցու Պատմության 584—585 էջերում «Ազգաբնակութիւն Պարսից թագաւորացն» խորագրով, նկատի ունենալով, որ այդ պատմությունն ադբյուրագիտական տեսակետից առանձին արժեք չունի և բացի այդ, այն հրատարակված է, ուստի չդրեցինք ներկա հրատարակության մեջ։ Ջահանշահի սպանության վկայությունն մեջ, որտ ներուլթին, հեղինակը շփոթում է վերջինիս որդու Հասան Ալուն և Ակ-Կոյունլու Ուզուն Հասանին։ Ճիշտ է, որ 1467 թ. Ուզուն Հասանը սպանում է Ջահանշահին, բայց սխալ է, որ առաջինը վերջինիս որդին է։

47. Հմմտ. XIII ժամանակագրություն, էջ 195։

48. Հմմտ. նույն տեղ, էջ 196։

49. Շահ Թահմազ I-ը թագավորել է 1524—1576 թ. թ.։

50. Խոսքը վերաբերում է Սամցխելի աթաբակ Կվարկվարեին։

51. Խարթլիի թագավոր Կոստանդին II-ը իշխել է 1479—1505 թ. թ.։

51բ. Սարգիս Բ, կաթողիկոս Հայոց 1484—1515 թ. թ.։

52. Խոսքը վերաբերում է Օսման II (1618—1622 թ. թ.) սուլթանին և նրա հաջորդ Մուստաֆա I-ին, որն առաջին անգամ գահ է բարձրացել 1617—1618 թ. թ., իսկ երկրորդ անգամ՝ 1622—1624 թ. թ.։

53. Շահ-Սեֆի I-ին, թագավորել է 1628—1642 թ. թ.։

54. Շահ-Արաս II, թագավորել է 1642—1667 թ. թ.։ Զաքարիա Ագուլեցին խոսելով սրա մահվան մասին գրում է. «Շահաբաս էր Խ. ամացս («Օրագրություն», էջ 68)։ Այս վկայությունը հմմտ. առաջարկվող վկայության հետ։

55. Շահ-Սուլեյման I-, թագավորել է 1667—1694 թ. թ.։ Համաձայն Զաքարիտ Ագուլեցու շահ Սուլեյմանը 18 տարեկան էր երբ գահ բարձրացավ։

56. Արևի խավարման վկայությունը հմմտ. Զաքարիտ Ագուլեցու «Օրագրության (էջ 43) տեղեկության հետ։

Իսկ Ճահուկի Շողակաթ եկեղեցու վերաշինման մասին ոչինչ հայտնի չէ։ Ալիշանը մեջ բերելով Ալեքսան Ալերոանոսեցի «Ժամբ» գրքի 1730 թ. հրատարակության տիտղոսաթերթը, որտեղ ասված է. «Լոյս ածող սորա Տ. Ալեքսանս Ալէքսանոսեցի, ի գիւղաքաղաքէն Ճահուկոյ, և որդի Շահրոյնեաց վանից, ամի Տեառն ՌՁԼ» ավելացնում է. «Եկեղեցի էջմիածնական Հայոց որ յանուանէ ոչ յիշի, եթէ Շողակաթ էր և եթէ այլ նորոգեցաւ ընդ այլսն որ յաւուրս Մովսիսի և Փիլիպոսի կաթողիկոսաց»։ («Սիսական», էջ 490)։ Ներկա վկայությամբ, որը շինարարության մասնակցողի տեղեկությունն է, հայտնի է դառնում Ճահուկի Շողակաթ վանքի շինարարական աշխատանքների ստույգ տարեթիվը։

57. Երնջակի Ս. Կարապետի վանքի և հարակից շենքերի վերաշինման մասին բավական ընդարձակ վկայություն տալիս է Առ. Դավրիժեցին. «Եւ սա (Նայի վարդապետը— Հ. Վ.) ևս յաւուրս Փիլիպպոսի կաթողիկոսի սկսաւ նորոգել զնոյն ինքն սուրբ Կարապետի վանքն, զի միանգամայն զամենայն յառաջագոյն եղեալ շինուածսն բակեալ եբարձ ի միջոյ, զեկեղեցին, և զաներն, և զխցերն, և զպարիսպն, և ապա շուրջանակի լայն և ընդարձակ, զհաստ և զբարձրագոյն պարիսպ էարկ, և ապա ի մէջն տունք և ապարանք ի բնակութիւն ինքեանց և հիւրոցս։ («Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ», էջ 347)։ Այնուհետև Ա. Դավրիժեցին հիշում է, որ Ս. Կարապետի վանքի շինարարությունն ավարտելուց հետո, նրա օծումը տեղի է ունենում 1653 թ. հոկտեմբերի 17-ին (նույն տեղ, էջ 348, հրատարակության մեջ «ԺԷ» փոխարեն սխալմամբ տված է «ՄԷ»)։ Սկզբում կարծում էինք, թե Երնջակի ս. Կարապետի վանքի օծման տարեթվի Ա. Դավրիժեցու վկայությունն աղճատված է և պիտի լինի ոչ թե ՌՃԻԲ (1653), այլ ՌՃԺԲ (1663) ինչպես առաջարկվող կայությունն է։ Այդ բանում համոզվելու համար ստուգեցինք Մատենադարանի Ա. Դավրիժեցու պատմության ձեռագրի վեց տարբերակները և նկատեցինք, որ ամենուր նշված է ՌՃԻԲ (1653) (տես՝ Ն 5081, էջ 341, Ն 1772, էջ 211բ, Ն 7296, էջ 215ա, Ն 5025, էջ 193ա, Ն 1773, էջ 227բ, Ն 4998, էջ 281բ)։

Ս. Կարապետի վանքի արևմտյան պատի, լուսամուտից վերև, խաչքարի վրա փորագրված է. «Եսայի ե Դաղար վարդապետ շինողը ՌՃԵ». իսկ հյուսիսային և արևելյան որմերի նա-կատին՝ «Եսայի վարդապետ շինող թվ. ՃՌԴ» (Ս. Սմբատեանց, «Նկարագիր Ս. Կարապետի վանից Երնջակայ...», էջ 4։ Հմմտ. Ա. վ. Սեգրակեան «Հնութիւնք հայրենեաց ի գավառին Երնջակու», էջ 16։ Ալիշան, «Սիսական», էջ 379)։ Եթե սույն արձանագրությունները վերագրենք վանքի շինարարական աշխատանքների ավարտմանը, ինչպես այդ անում են Սմբատյանը և ուրիշները, ապա այն Ա. Դավրիժեցու վկայությունից շեղվում է մի դեպքում 2, մյուս դեպքում 3 տարով։ Այսինքն վանքի շինարարությունն առաջին արձանագրության համաձայն ավարտվել է 1656 թ., իսկ երկրորդի՝ 1655 թ.։ Նկատի առնելով այս հանգամանքը, կարծում ենք արձանագրության տարեթվերը հավանորեն վերաբերում են ոչ թե վանքի շինարարության ավարտմանը, այլ արձանագրության փորագրմանը։ Թերևս դրանով բացատրվի երկու արձանագրություններում տեղ դտած տարբեր թվերի դոյության փաստը։ Այսպիսով եթե կասկածելի չէ արձանագրության վերընթերցումը և ճիշտ է վերոհիշյալ ենթադրությունը, ապա դրանով հաստատվում է Ա. Դավրիժեցու վկայությունը։ Հետևապես Ս. Կարապետ վանքի շինարարության մասին առաջարկվող վկայության տեղեկությունը թերևս ավելի ճիշտն ու հավանականն է։

Ա. Դավրիժեցին շինարարական ամբողջ աշխատանքները վերագրում է վանքի առաջնորդ Եսայուն, մինչդեռ վերջինս Ս. Կարապետի վանքի առաջնորդ է դառնում 1654 թ. («Սիսական», էջ 380), այսինքն վանքի օծումից հետո։ Հետևապես շինարարական աշխատանքներն սկսվել է նրա նախորդ՝ Առաքել Բոպիկի օրոք։ Իսկ Ս. Կարապետ վանքի հարակից շենքերի կառուցումները, որոնց մասին վկայում է ժամանակագրության սույն հատվածը, կարող ենք վերագրել նույն վանքի առաջնորդ Եսայիին։

57ա. Բնագրում մեկ բառ՝ շինարարության օբեկտը պակասում է։

58. Տես և հմմտ. վերևում, էջ 395։

59. 1679 թ. երկրաշարժի մասին միևնույն ձեռագրի 393բ էջում պահվել է մեկ ուրիշ վկայություն ևս, որտեղ կարդում ենք. «Թվին ՌՃԻԸ (1679) շարժ եղև մայիսի Դ (4) օրն չորէքշաբթի Երևան»։

Այս երկու վկայության միջ ամիսը ոխալ է նշված, պետք է լինի հունիսի 4-ին։ Այս հաստատում են Զաքարիա Ագուլեցին (տես նրա օրագրությունը, էջ 143), Զաքարիա Սարկավագը («Պատմագրութիւն», հատոր երկրորդ, էջ 104) և մեր ձեռքի տակ գտնված ուրիշ ժամանակագրությունները։ Բացի դրանից, վերոհիշյալ վկայության համապատասխան 1679 թ. մայիսի 4-ը չորեքշաբթի է, մինչդեռ իրականում այդ օրը կլինի կիրակի, իսկ 1679 թ. մայիսի առաջին չորեքշաբթին կլինի մայիսի 7-ին։ Մինչդեռ 1679 թ. հունիսի 4-ը իրոք չորեքշաբթի է։ Տես և հմմտ. «Խաղբակյանք...», հատոր Գ, հավելված Բ, էջ 132—133։

60. Խոսքը վերաբերում է 1679 թ. հունիսի 4-ին տեղի ունեցած մեծ երկրաշարժից հետո կատարված շինարարական աշխատանքներին։ Ալիշանը «Այրարատում» մեջ է բերում ժամանակակցի մի վկայություն, ըստ որի «Ի Զորակն Այրեվանից առաւել եղեւ աւերումն և քակտումն, վասն զի է ամենայն շինուածքն ի մէջ խոր ձորի, և շուրջ բոլորաւն՝ վէմք ահագին. և յորժամ շարժեաց՝ շուրջանակի թաւալեցան յամենայն վիմաց և լցան վանքն ամենայն, մինչ զի ոչ երեւիր նշմարանք շինութեան, բայց միայն կուտակս քարի երևէր, որք տեսողացն զարհուրեալ դողային...» (էջ 348)։ Այնուհետև հիշատակագիրը շարունակում է, որ վանքի նոր առաջնորդ Դավիթը, (վերջինիս նախորդը 1679 թ. մեծ երկրաշարժի ժամանակ գտնվելիս է եղել Երևանի Անապատ եկեղեցում, որտեղ և մահացել է եկեղեցու փլատակների տակ (հմմտ. «Զ. Ագուլեցու օրագրությունը», էջ 143) ձեռնամուխ է լինում Այրիվանքի վերաշինման աշխատանքներին, որոնք, հիշատակագրի համաձայն, տեղի են ունեցել 1684—1687 թ. թ. միջոցում։ Եթե ժամանակագրության և սույն վկայություններից որևէ մեկում թյուրիմացություն չկա, ապա մնում է ենթադրել, որ Դավթի 1684—1687 թ. թ. շինարարական աշխատանքների ժամանակ Գեղարդի եկեղեցին չի վերաշինվել, այլ վերաշինվել են նրա հարակից շենքերը. «... արար և սկսեալ շրջապատ բարձրաբերձ պարիսպ տաշեալ քարով, հաստատուն և ամրապինդ, նաև շինուածք բոլորակի, թանապայք, քոշք, ապարանք, սենեակք, խոհանոցք և այլ ամենայն շտեմարանք, տաշեալ քարով, կրով և թաղով, մինչեւ տեսողացն հիացեալք» (էջ 348)։ Իսկ եկեղեցին վերաշինվել է 1698 թ., ինչպես ճիշտ մատնացույց է անում մեր ժամանակագրությունը։

61. Խոսքը վերաբերում է Ստ. Ջուղայեցուն։ Տես և հմմտ. վերևում, էջ 285, 287, ծանոթ. 10։

62. Բնագրի մի բառը վնասված է։

63. 1758 թ. սուրբ խաչը կընկնի սեպտեմբերի 13-ին։

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

№ 82. Ջանազան նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 276։ Մեծությունը՝ 22×17։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Նոտր գիր։ Գրիչը՝ Եսայի վարդապետ Թոխաթեցի, Հարությունս սարկավագ Հադբատեցի։ Ժամանակը՝ 1556—1762 թ. թ., 1670 թ.։ Վայրը՝ Թոխաթ, Էջմիածին։

№ 84. Աղոթքների, խրատների, տաղերի և այլ նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 282։ Մեծությունը՝ 21×15,5։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Նոտր գիր։ Գրիչը՝ Զաքարիա Երզնկացի։ Ժամանակը՝ 1614 թ.։ Վայրը՝ անհայտ։

№ 482. Ջանազան նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 94։ Մեծությունը՝ 22,5×17։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը բավարար։ Միասյուն։ Նոտր գիր։ Ժողովածուի մի մասն ընդօրինակվել է 1600 թ., գրիչը և վայրն անհայտ, իսկ մյուս մասը 1711 թ., Անտոն սարկավագի կողմից, Թադեոս Առտրեալի վանքում։

№ 519. Վարդան Այգեկցու տոակները և այլ նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը 126։ Մեծությունը՝ 21×14,5։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Նոտր գիր։ Գրիչը և վայրը՝ անհայտ։ Ժողովածուի առաջին մասն ընդօրինակվել է մինչև 1604 թ.։

№ 582. Պատմական և այլ նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 189։ Մեծությունը 17,5×15։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Բոլոր գիր։ Գրիչը՝ Դավիթ, Կիրակոս Բանասեր և ուրիշներ։ Ժամանակը՝ 1443 թ. հետո։ Վայրը՝ անհայտ։

№ 615. Համառոտ հաւաքմունք ի գրոց սրբոց։ Թերթերի քանակը՝ 59։ Մեծությունը՝ 19,5×15,5։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Նոտր գիր։ Գրիչը՝ Բարսեղ արքեպիսկոպոս Փառակեցի։ Ժամանակը՝ XVII դար (?)։ Վայրը՝ անհայտ։

№ 663. Քարոզների, պատմական և այլ նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 279։ Մեծությունը՝ 21,7×16։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն և երկսյուն։ Նոտր գիր։ Ժողովածուի 236ա—239բ էջերում գտնվում է «Եռամեծի և քաջ վարդապետի Մխիթարայ Դոշի խստակրոն ճգնավորի և բանիբուն հռետորի ասացեալ զաղօթս ի ժամ սուրբ պատարագին» աշխատության տպագիր բնագիրը։ Ժողովածուն ընդօրինակել են տարբեր մարդիկ մինչև 1724 թ.։ Հեթում Պատմիչին վերագրված ժամանակագրությունը և Վահրամ Բաբունու չափածո պատմությունն ընդօրինակել է Պետրոս Աստապատեցին, 1724 թ.,* Հալեպում։

№ 713. Պարզատոմար և այլ նյութեր։ Թերթերի քանակը՝ 139։ Մեծությունը՝ 14,5×9,5։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Նոտր գիր։ Գրիչը՝ Հովհաննես, Բարսեղ։ Ժամանակը՝ 1687 թ.։ Վայրը՝ Շատախ գյուղ (Գանձակի շրջանում)։

№ 745. Ժողովածու։ Թերթերի քանակը՝ 194։ Մեծությունը՝ 15,3×10,2։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Նոտր գիր, բոլոր գիր։ Գրիչը՝ անհայտ։ Ժամանակը՝ 1607 թ.։ Վայրը՝ Ուրհայ։

№ 1127. Ջանազան նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 234։ Մեծությունը՝ 15×11։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն, Նոտր գիր։ Գրիչը և վայրը անհայտ։ Ժամանակը՝ XVII դար (?)։

№ 1486. Պատմական նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 211։ Մեծությունը՝ 26×18։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Երկսյուն։ Նոտր գիր։ Գրիչը՝ Ղաղարի։ Ժամանակը՝ 1597 թ.։ Վայրը՝ Բաբերտ։

№ 1495. Պատմական, տոմարագիտական և այլ նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 183։ Մեծությունը՝ 25,5×20,5։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Երկսյուն։ Նոտր գիր։ Գրիչը՝ Եփրեմ վարդապետ։ Ժամանակը՝ 1684։ Վայրը՝ Կ. Պոլիս։

№ 1737. Ջանազան նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 203։ Մեծությունը՝ 20×15։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Նոտր գիր։ Գրիչը՝ Ասար Սեբաստացի։ Ժամանակը՝ XVII դար։ Վայրը՝ անհայտ։

№ 1786. Պատմական և այլ նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 96։ Մեծությունը՝

---

* Ժողովածուի 269ա էջում գտնվում է գրչի չափածո հիշատակարանը, որից իմանում ենք, որ նա Հեթում Պատմիչին վերագրված ժամանակագրությունն ընդօրինակել է «և ԱՀԱ ՃԱՌ թուականին»։ Այսինքն Ա (1)+Հ (70)+Ա (1)+Ճ (100)+Ա (1)+Ռ (1000)=1173, սրան ավելացրած հայկ. 551 թ. =1724 թ.։

15,9 × 9,5։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Նոտր գիր։ Գրիչը՝ Մարտիրոս գի Առարեր։ Ժամանակը՝ XVIII դարի առաջին քառորդ։ Վայրը՝ զանազան վայրեր։

№ 1469. Պատմական և այլ նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 400։ Մեծությունը՝ 21,6 × 15,3։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Երկսյուն, իսկ ժամանակագրությունը միասյուն։ Բոլոր գիր։ Գրիչը՝ Անգրեաս սարկավագ Եվդոկիացի։ Ժամանակը՝ 1585—1589 թ. թ.։ Վայրը՝ Եվդոկիա (Թոխաթ)։

№ 1973. Տոմարական և այլ նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 327։ Մեծությունը՝ 17,5 × 12։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Բոլոր գիր։ Գրիչը՝ Աբրահամ և Գրիգորիս։ Ժամանակը՝ 1342 թ.։ Վայրը՝ Երզնկա։

№ 2037. Պատմական նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 187։ Մեծությունը՝ 28,5 × 21,5։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Երկսյուն։ Բոլոր գիր։ Գրիչը՝ Յովասաբ Ապարանեցի։ Ժամանակը՝ 1421 թ.։ Վայրը՝ Կաֆա։

№ 2151. Գր. Տաթևացու Քարոզգիրքը։ Թերթերի քանակը՝ 184։ Մեծությունը՝ 18 × 14։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Նոտր գիր։ Գրիչը՝ Մարտիրոս երեց։ Ժամանակը՝ 1587 թ.։ Վայրը՝ Սեբաստիա։

№ 3079. Պատմական նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 379։ Մեծությունը 20,5 × 16,5։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Երկսյուն։ Նոտր գիր։ Ընդօրինակությանը մասնակցել են մի քանի գրիչ մինչև 1693 թ.։ Ժողովածուի երկրորդ մասն ընդօրինակել է Մարգար երեց Զմյուռնացին, 1693 թ., Կ. Պոլսում։

№ 3189. Տաղարան։ Թերթերի քանակը՝ 156։ Մեծությունը 15 × 10։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Նոտր գիր և բոլոր գիր։ Գրիչը՝ Ղուկաս աբեղա, Մարտիրոս։ Ժամանակը՝ 1627—1631 թ.։ Վայրը՝ անհայտ։

№ 4231. Աստվածաբանական և պատմական նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 120։ Մեծությունը՝ 18 × 12,2։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարարից ցածր՝ սկզբից և վերջից թերի, կան մաշված թերթեր։ Միասյուն։ Բոլորագիր։ Ժամանակը՝ XV դար։ Գրիչը՝ և վայրը՝ անհայտ։

№ 3194. Մաշտոց և այլ նյութեր։ Թերթերի քանակը՝ 302։ Մեծությունը՝ 14,5 × 9,5։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Բոլոր գիր։ Գրիչը՝ Ազարիա։ Ժամանակը՝ 1676 թ.։ Վայրը՝ Նոր Ջուղա։

№ 3425. Պատմական և այլ նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 202։ Մեծությունը՝ 15 × 10։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ սկզբից թերի, կան կորած թերթեր։ Միասյուն։ Բոլոր գիր և նոտր գիր։ Գրիչը՝ Գրիգոր, Հակոբ։ Ժամանակը՝ XVII դար։ Վայրը՝ անհայտ։

№ 3527. Քարոզգիրք։ Թերթերի քանակը՝ 162։ Մեծությունը՝ 17 × 13։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Նոտր գիր և բոլոր գիր։ Երկսյուն և միասյուն։ Գրիչը՝ ժամանակը, վայրն անհայտ։

№ 3695. Պատմական և այլ նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 10։ Մեծությունը՝ 16 × 10, Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Նոտր գիր։ Գրիչը և վայրն անհայտ։ Ժամանակը՝ 1665 թվականից հետո մինչև 1694 թ.։

№ 3854. Աստվածաբանական նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 310։ Մեծությունը՝ 15,5 × 11։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Բոլոր գիր։ Գրիչը՝ Հակոբ և ուրիշներ։ Ժամանակը՝ 1471։ Վայրը՝ Սոկուլու (Շիրվանի երկիր)։

№ 3964. Աղոթքների, մեկնությունների և այլ նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 119։ Մեծությունը՝ 20 × 13։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Նոտր գիր։ Գրիչը՝ մի քանի հոգի։ Ժամանակը՝ XVII—XVIII դար (?)։ Վայրը՝ անհայտ։

№ 4442. Պատմական նյութերի ծաղկաքաղ։ Թերթերի քանակը՝ 778։ Մեծությունը՝ 29 × 21։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Նոր գրչություն։ Գրիչը՝ Ղևոնդ Փիրղալեմյան։ Ժամանակը՝ XIX դարի երկրորդ կեսում։ Վայրը՝ զանազան վայրեր։

№ 4515. «Նշխարք պատմութեան Հայոց»։ Էջերի քանակը՝ 928։ Մեծությունը՝ 32,5 × 21։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Նոր գրչություն։ Գրիչը՝ Ղևոնդ Փիրղալեմյան։ Ժամանակը՝ 1873—1883 թ. թ.։ Վայրը՝ զանազան վայրեր։

№ 4618. Քարոզների, մեկնությունների և այլ նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 201։ Մեծությունը՝ 20,5 × 15։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ վնասված, կան կորած թերթեր։ Միասյուն։ Բոլոր գիր և նոտր գիր։ Գրիչը՝ Գրիգոր, Մելքոն, Իգնատիոս երեց։ Ժամանակը՝ 1693—1700 թ. թ.։ Վայրը՝ Վան։

№ 5175. Քարոզգիրք։ Թերթերի քանակը՝ 414։ Մեծությունը՝ 15,5 × 13։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարարից ցածր՝ վերջից թերի։ Միասյուն։ Բոլոր գիր։ Գրիչը՝ Նիկողայոս կրոնավոր։ Ժամանակը՝ 1418 թ.։ Վայրը՝ Վարագ։

№ 5599. Զանազան նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 233։ Մեծությունը՝ 18 × 13։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարարից ցածր, կան պոկված, մաշված թերթեր։ Միասյուն։ Բոլոր գիր։ Գրիչը՝ Ստեփանոս քահանա։ Ժամանակը՝ 1347 թ.։ Վայրը՝ Ուրել գյուղ (Կիլիկիայում)։

№ 6354. Զանազան նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 372։ Մեծությունը՝ 25 × 18։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բայբայված։ Երկսյուն։ Բոլոր գիր և նոտր գիր։ Գրիչը և վայրը անհայտ։ Ժամանակը՝ 1735 թ.։

№ 6562. Զանազան նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 206։ Մեծությունը՝ 21 × 15։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Երկսյուն և միասյուն։ Նոտր գիր։ Գրիչը և վայրն՝ անհայտ։ Ժամանակը՝ 1686 թ.։

№ 6691. Պատմական նյութեր։ Թերթերի քանակը՝ 8։ Մեծությունը՝ 20 × 14։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Նոտր գիր։ Գրիչը՝ Ստեփանոս Գյումուշխանեցի։ Ժամանակը՝ 1783 թ.։ Վայրը՝ Օրթա գյուղ (Կ. Պոլսի շրջանում)։

№ 6938. Մեկնություններ և այլ նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 150։ Մեծությունը՝ 16,5 × 12։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Նոտր գիր։ Գրիչը՝ Ավետիս, Նոտեր։ Ժամանակը՝ 1355 թ.։ Վայրը՝ Աղջո վանք։

№ 7040. Տոմար և տոմարագիտական մեկնություններ։ Թերթերի քանակը՝ 290։ Մեծությունը՝ 14 × 15։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Նոտր գիր։ Գրիչը՝ Առաքել։ Ժամանակը՝ 1641 թ. (?)։ Վայրը՝ Լայուռ քաղաք (Հնդկաստանում)։

№ 7584. Քարոզգիրք։ Թերթերի քանակը՝ 722։ Մեծությունը՝ 25 × 17,5։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Երկսյուն։ Նոտր գիր։ Գրիչը՝ Խաչատուր Զոլախ։ Ժամանակը՝ 1698 թ.։ Վայրը՝ Կ. Պոլիս։

№ 7709. Տաղարան։ Թերթերի քանակը՝ 244։ Մեծությունը 15 × 11։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բայբայված, սկզբից և վերջից թերի, կան մաշված և կորած թերթեր։ Միասյուն։ Նոտր գիր։ Գրիչը՝ Խաչդուզ (նույն ինքը Խաչատուր երեց)։ Ժամանակը՝ սկսել է գրել 1620 թվականից։ Վայրը՝ Կաֆա։

№ 7715. Տաղարան։ Թերթերի քանակը՝ 126։ Մեծությունը՝ 14 × 9,5։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բայբայված։ Միասյուն։ Նոտր գիր և շեղագիր։ Գրիչը և վայրն՝ անհայտ։ Ժամանակը՝ 1686 թ. (?)։

№ 7816. Քարոզգիրք և կանոնգիրք։ Թերթերի քանակը՝ 43։ Մեծությունը՝ 20 × 13։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բայբայված։ Միասյուն։ Նոտր գիր։ Գրիչը՝ Հովհաննես։ Ժամանակը՝ 1614 թ.։ Վայրը՝ Թբիլիսի։

№ 7841. Պատմական նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 317։ Մեծությունը՝ 29 × × 15,5։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Երկսյուն։ Նոտր գիր։ Գրիչը՝ Բաղդասար գպիր։ Ժամանակը՝ 1669 թ.։ Վայրը՝ անհայտ։

№ 8100. Զանազան նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 371։ Մեծությունը՝ 21 × 15։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ վնասված։ Միասյուն։ Նոտր գիր։ Գրիչը՝ Մանվել քահանա, Կարապետ վարդապետ։ Ժամանակը՝ 1784 թ.։ Վայրը՝ Կարս։

№ 8184. Պատմական նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 58։ Մեծությունը՝ 19,5 × × 15։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարարից ցածր, վերջից թերի։ Երկսյուն։ Նոտր գիր։ Գրիչը և վայրն անհայտ։ Ժամանակը՝ 1672 թ. հետո։

№ 8233. Զանազան նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 151։ Մեծությունը՝ 21 × 15։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարարից ցածր։ Միասյուն։ Նոտր գիր և շեղագիր։ Գրիչը՝ հիմնականում Իսահակ վարդապետ, Հովհաննես գպիր։ Ժամանակը՝ 1693—1695 թ. թ.։ Վայրը՝ Թաթեոս Առաքելի վանք։

№ 8481. Պատմական նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 217։ Մեծությունը՝ 15,5 × 11,5։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ վնասված։ Միասյուն։ Բոլոր գիր։ Գրիչը և վայրն անհայտ։ Ժամանակը՝ XIV դար. վերանորոգված։

№ 8509. Զանազան նյութերի ժողովածու։ Թերթերի քանակը՝ 215։ Մեծությունը՝ 15 × 11։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ բավարար։ Միասյուն։ Նոտր գիր։ ժողովածուի առաջին մասի ընդօրինակության ժամանակը, գրիչը, վայրն՝ անհայտ, երկրորդ մասի գրիչը՝ Դավիթ, ժամանակը՝ 1688 թ.։ Վայրն՝ անհայտ։